Նոր կյանք՝ նոր ավանում

Հայրենադարձներին օգնելու նպատակով սփյուռքի և խորհրդային իշխանությունների համատեղ գործունեության ամենավառ օրինակներից էր Նուբարաշեն ավանի կառուցումը: Այսօր Երևանի 12 վարչական շրջաններից մեկը հանդիսացող այդ թաղամասը նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության բազմաթիվ նախագծերից մեկն էր Արևելյան Հայաստանում:

Հավերժացնել անունը

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից ընդամենը երեք տարի անց՝ 1923-ին, Բարեգործականը դարձավ միակ ավանդական կազմակերպությունը, որին թույլատրվեց գործել հանրապետությունում: 1926 թ. Ֆիլադելֆիայում կայացած ՀԲԸՄ ԱՄՆ-ի մասնաճյուղերի խորհրդակցական համաժողովում որոշում է կայացվում Միության 25-ամյակի առիթով և ի պատիվ նախագահ Պողոս Նուբարի, հետագա հինգ տարիների ընթացքում հատուկ հանգանակության միջոցով գոյացնել 250 հազար դոլարի գումար: Տեղեկացնելով Պողոս Նուբարին այդ որոշման մասին՝ համաժողովի մասնակիցները խնդրում են նրան հայտնել իր կարծիքը նշված գումարի օգտագործման կերպի վերաբերյալ: Կարելի է ենթադրել, որ շատ-շատերի համար նախագահի պատասխանը թվում էր ակնհայտ՝ նշված գումարը հատկացնել Միության արդեն գործող հաստատություններին (որբանոցներ, գաղթականներ և այլն) կամ էլ հիմնել նորերը: Պողոս Նուբարը, սակայն, գաղթականության ապագայի հարցի իրական և արմատական լուծումը այդ ժամանակ արդեն համարում էր նրանց տեղափոխումը Հայաստան: Զանգվածային ներգաղթը կապված էր, սակայն, բազմաթիվ և բազմաբնույթ դժվարությունների, այդ թվում նաև բնակարանների բացակայության հետ, ինչի մասին բազմիցս նշում էին Հայաստանի իշխանությունները: Անցած տարիների փորձը վկայում էր, որ սփյուռքահայությունը տարբեր՝ տնտեսական և քաղաքական պատճառներով կամ ի վիճակի չէր, կամ էլ պարզապես նպատակահարմար չէր համարում ֆինանսավորել բնակարանային շինարարությունը Հայաստանում, կարծելով, որ եղած միջոցները նախ և առաջ պետք է ծառայեցնել տարբեր երկրներում համայնքային կառույցներին, ընդհանրապես գաղթականության կարիքները հոգալուն: Մյուս կողմից՝ Բարեգործականի սեփական միջոցները անբավարար էին նման խոշոր ծրագիրը ինքնուրույն իրագործելու համար: Այդ պայմաններում, Պողոս Նուբարը, տեղեկանալով «հոբելյանական» հանգանակության մասին, որոշում է դրանից գոյացած գումարն ամբողջությամբ տրամադրել Հայաստանում հատուկ մի ավանի կառուցմանը, ուր պետք է բնակվեին ներգաղթած հայերը: Միևնույն ժամանակ, ցանկանալով քաջալերել հանգանակության բոլոր հնարավոր մասնակիցներին, նա հայտարարեց, որ եթե մինչև 1931 թ. ապրիլի 30-ը հանգանակվի 250 հազար դոլար, ապա նա իր կողմից կտրամադրի ևս 100 հազար: Միության անդամներն էլ իրենց հերթին որոշեցին հավերժացնել նրա անունն ու գործը՝ կառուցվելիք ավանը կոչելով Նուբարաշեն:

Ճգնաժամի պայքարում

Հանգանակության սկիզբը շատ տպավորիչ էր և խոստումնալից: Նյու Յորքում պաշտոնական բացման օրը հաջողվեց հավաքել շուրջ 102 հազար դոլար: Նույնպիսի մի հավաքի ընթացքում Չիկագոյում հանգանակվել էր 25 հազար: Այդչափ հաջող մեկնարկած հանգանակությունը չունեցավ, սակայն, նույնպիսի շարունակություն՝ նախատեսված գումարը հավաքվում էր չափազանց դանդաղ և դժվարությամբ: Հիմնական պատճառը նույն այդ տարիներին ԱՄՆ-ում սկիզբ առած տնտեսական մեծ ճգնաժամն էր, որի զոհերը դարձան նաև մեծ թվով ամերիկահայեր: Համաձայն «Միութիւն» ամսագրի տվյալների՝ 1929 թ. վերջերին հավաքված գումարը կազմում էր ընդամենը 153 հազար դոլար: Հանգանակության նման ընթացքը հարցականի տակ էր դնում ավանի կառուցման ծրագիրն ընդհանրապես:

Գտնել հիշյա տեղը

Իրենց հերթին Հայաստանի իշխանությունները թեև տվել էին սկզբունքային համաձայնությունը, այնուամենայնիվ, ուղղակի կամ անուղղակի ձևով ձգձգում էին դրա իրականացումը: Խորհրդային Հայաստանում շատ դժվար էր խոշոր բուրժուազիայի դեմ ծավալված գաղափարական պայքարի պայմաններում կապիտալիստի անունով ավան կառուցել: Կառավարությունը, չհրաժարվելով հանգանակած գումարներից, հողամասեր էր առաջարկում Եղվարդի մոտակայքում, Մեծամորի շրջանում, Սարդարապատում, երկար-բարակ վիճարկում ավանի անվանակոչության հարցի շուրջ, նույնիսկ առաջարկում, որ ավանի անունը թողնեն որոշելու նրա բնակիչներին, որին, առանց հապաղելու, համաձայնվում է Պողոս Նուբարը, միայն թե իր

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՇԱՏ ԴԺՎԱՐ ԷՐ ԽՈՇՈՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՄ ԾԱՎԱԼՎԱԾ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՊԻՏԱ-ԼԻՍՏԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՎԱՆ ԿԱՌՈՒՑԵԼ

↑ Ֆրիտյոֆ Նանսեն

← Ալեքսանդր Թամանյանի հեղինակած Նուբարաշենի նախագիծը

Ֆրիտյոֆ Նանսենի ուղերձը, 1929 թ. ապրիլի 5

«Մեծ հաճոյքով կ՚իմանամ թէ Ամերիկայի Հայերուն մէջ շարժում մը կայ գաղթականներու տեղաւորման համար Հայաստանի մէջ գիւղաքաղաք մը կառուցանելու և զայն Նուբարաշէն անուանելու, ի պատիւ Պօղոս Նուպարի, մեծանուն հայ հայրենասէրին և մարդասէրին։ Հարկ չկայ ըսելու թէ ամենազերմ կերպով կը համակրիմ այս ձեռնարկին։ Չորս տարիէ ի վեր ես կ՚աշխատիմ Ազգերու Ընկերութիւնը շահագրգռելու Հայաստանի հողերուն բարելաւման խնդրով, ինչ որ լաւագոյն լուծումը պիտի ըլլայ գաղթականներու հարցին։ Իմ ջանքերուս արդիւնքը ինչ որ ալ ըլլայ, վստահ եմ թէ Հայերուն անձնուիրութիւնը իրենց պապական հայրենիքին, ինչպէս նաև պատսպեալ ազգակիցներու վիճակին բարուոքման և Երևանի կորովի փոքրիկ Հանրապետութեան վերաշինութեան համար, անոնց ցոյց տուած քաջասրտութիւնը, հաստատակամութիւնը և վրհողութիւնը հիացում պիտի պատճառեն քաղաքակիրթ աշխարհին»։

կենդանության օրոք կառուցված տեանի ավանը։ Ի վերջո, հողամասը տրամադրվում է ոչ թե Սարդարապատում, ինչպես առաջարկել էր Ալեքսանդր Թամանյանը, այլ Երևանին մերձ Նորագավիթ շրջանում։

Հեռանալուց առաջ

Պողոս Նուբարը, կանխազգալով իր կյանքի մոտալուտ ավարտը, ձգտում էր անել հնարավոր այն ամենը, ինչը կնպաստեր Նուբարաշենի արագ կառուցմանը։ Եվ դժվար չէ պատկերացնել այն հիասթափությունը, որ ապրեց նա, իմանալով հանգանակության ոչ հաջող, դանդաղ ընթացքի մասին։ Հայտնի է մի դեպք, երբ 1930 թ. մայիսին, այսինքն՝ Պողոս Նուբարի մահից մոտ մեկ ամիս առաջ։ Փաշան՝ ՀԲԸՄ ղեկավարներից մեկին՝ Մալազյանին և անձնական քարտուղար Հեքիմյանին հայտնում է, որ քանի որ գաղութահայությունն այդպես էլ չկարողացավ 250 հազարի հանգականությունը գլուխ հանել, նա ջնջում է իր նվիրատվությունը։ Ասում են, որ Մալազյանը «լուրջ ու համառ լեզվով» փորձում էր ազդել նրա քանականության վրա, իսկ Հեքիմյանը՝ «մտերմիկ և ընտանի ժպիտով՝ զգացմունքներին»։ Բայց Նուբարը նույն օրը գրությամբ հայտնում է Միությանն իր որոշումը։ Այդուհանդերձ, հաջորդ օրը նա հրահանգում է Հեքիմյանին գրել երկու նամակ։ Մեկը՝ շվեյցարական Լոմպար Օտյե բանկին, որպեսզի այնտեղ գտնվող իր 208 հազար դոլարը փոխանցվի ՀԲԸՄ-ին, մյուսն էլ Միությանը, որտեղ նշվում էր, որ բանկից փոխանցվող 208 հազարից 100 հազարը հատկացվի Նուբարաշենի հիմնադրամին։

Անիպային ավան

Նույն 1930-ի ապրիլին և մայիսին՝ Երևանում և Փարիզում Խորհրդային Հայաստանի կառավարության և ՀԲԸ Միության Կենտրոնական վարչական ժողովի միջև վերջապես ստորագրվեց «Համաձայնագիր Նուբարաշեն տիպար ավանի կառուցման մասին», որին հետևեց Միության առաջին 50 հազար դոլարի մասնավճարը։ Իսկ արդեն ամռանը Երևանի հարավային սահմանների մոտ սկսվեցին շինարարական աշխատանքները, որոնք ղեկավարում էր այդ նպատակով ստեղծված հատուկ հանձնախումբը՝ նախագծի հեղինակ Ալեքսանդր Թամանյանի գլխավորությամբ։ Հաջորդ վեց տարիների ընթացքում Նուբարաշենին, նրա կառուցման հետ կապված բոլոր հարցերին առանձնահատուկ կարևորություն էր տրվում Միության ղեկավարության և շարքայինների կողմից։ Ավելին, այն բանից հետո, երբ հայրենակցական միություններին առաջարկվեց մասնակցել ավանի առանձին թաղամասերի կառուցմանը, ուր պետք է բնակվեին Արևմտյան Հայաստանի համապատասխան բնակավայրերից բռնագաղթածները, Նուբարաշենը հայտնվեց շատ ավելի մեծ զանգվածի ուշադրության կենտրոնում։
1931 թ. հուլիսին կայացած հերթական Ընդհանուր ժողովում նշվում էր, որ արդեն ամռանը կավարտվի 100-120 բնակարանների կառուցումը, և Հունաստանից և այլ տեղերից եկած աշխատավոր գաղթականները կտեղափոխվեն նորակառույց ավան։ Մեկ տարի անց, սակայն, Միության կողմից ներկայացված հաշվետվությունից պարզվում է հետևյալ պատկերը. Նախատեսվածի փոխարեն տասը բնակարաններ ամբողջովին կառուցված և ութը կիսաշեն վիճակում են։ Պատճառներից մեկը Զանգեզուրի շրջանի աղետալի երկրաշարժն էր։ Կառավարությունը ստիպված եղավ նախ և առաջ լուծել արհավիրքից անօթևան մնացած հազարավոր մարդկանց բնակության հարցը։

Լրացուցիչ ռուբլիներ

Նուբարաշենը կառուցվում էր դանդաղ և ոչ միայն վերը նշած պատճառներով։ Մի կողմից, այդ նույն տարիներին Հայաստանում մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների, մեծ թվով բնակելի շենքերի կառուցումը, մյուս կողմից՝ որակյալ աշխատուժի ու շինանյութերի մշտական պակասը։ Բացի այդ, Հայաստանի ղեկավարությունը ներգաղթի կազմակերպման և իրագործման վրա էր ծախսում այն գումարները (կամ նրանց մի մասը), որոնք սփյուռքահայերի կողմից տրամադրվել էին նույն այդ ներգաղթողների համար երկրում ավանների, սոցիալ-մշակութային և այլ բնույթի հաստատությունների կառուցման նպատակով։ Տրամադրած միջոցների

↓ ՀԲԸՄ հիմնադիր Պողոս Նուբարը

→ Նուբարաշենում հաստատված առաջին գաղթականները



↑ «Վաղուան Նուպարաշէնը». դրամահավաքի նպատակով ստեղծված փոստաքարտ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԻՑ ԲԱՑԻ, ԱՄԵՆԱԴԺՎԱՐ ԼՈՒԾՎՈՂԸ, ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՋՐԱՆՑՔԻ ՈՒ ՋՐՄՈՒՂԻ ԽՆԴԻՐՆ ԷՐ: ԴՐԱՆՔ ՊԵՏՔ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԵԻՆ 1937-Ի ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ

նման օգտագործման պայմաններում անխուսափելիորեն դանդաղում կամ ընդհանրապես չէր իրականացվում նախատեսված շինությունների կառուցումը, ինչը, իր հերթին, նոր բարդություններ էր առաջացնում իշխանությունների համար՝ թե՛ սփյուռքի համապատասխան կազմակերպությունների և թե՛ ներգաղթածների հետ իրենց հարաբերություններում: Մյուս կողմից՝ կառավարությունը, նշված կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելիս, ըստ ամենայնի, տրամադրվող գումարների դիմաց ստանձնել էր պարտավորություններ, որոնք դժվար իրագործելի էին առկա ֆինանսատնտեսական պայմաններում: Այսպես, օրինակ, կառավարությունը դեռևս 1934 թ. ապրիլի 27-ի նիստում, քննարկելով Նուբարաշենի կառուցապատման հարցը, որոշում է. «Նկատի ունենալով, որ ՀԲԸՄ միջոցով հավաքված գումարը չի ապահովում վերոհիշյալ նախագծերով նախատեսված շենքերի կառուցման ավարտումը և ընդառաջելով նվիրատուներին, գտնել անհրաժեշտ ժողկոմխորհի միջոցներից լրացուցիչ կերպով 541 հազար ռուբլի հատկացնել այդ շենքերի կառուցման համար»:

Սխալ ու անհանդուրժելի

1936 թվականի հուլիսի 21-ին Կենտկոմը՝ ի դեմս առաջին քարտուղար Իոսիֆ Ստալինի և Խորհրդային Միության կառավարությունը՝ ի դեմս նրա նախագահ Վյաչեսլավ Մոլոտովի, ընդունում են նախադեպը չունեցող մի որոշում՝ «Հայ ներգաղթողներին Հայկական ԽՍՀ-ում տեղավորելու միջոցառումների մասին»: Փաստաթղթում հենց սկզբից «սխալ և անհանդուրժելի» է գնահատվում Հայաստանի կառավարության կողմից «արտասահմանյան հասարակական կազմակերպությունների և առանձին հայ նվիրատուների առջև ստանձնած պարտավորությունները չկատարելու հաստատված պրակտիկան»: Այստեղ բավական մանրամասն թվարկված են այն միջոցառումները, որոնք՝ ըստ Խորհրդային Միության ղեկավարների, պետք է ուղղեին Հայաստանի կառավարության և Կոմկուսի «կոպիտ սխալները», շինարարական բոլոր աշխատանքների 50%-ը պետք է ավարտվեր 1937 թ. հունվարի 1-ին, իսկ ամբող-

ՀԲԸՄ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը հիմնադրվել է 1906 թ. Սահիրեռում՝ ազգային գործիչ Պողոս Նուբարի և եգիպտահայ համայնքի ակնառուներ ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Նրանց հիմնական նպատակն էր ստեղծել մի միություն, որը կոչված էր ամեն կերպ ազակցելու հայ ժողովրդին, որի գոյությունը՝ իբրև Օսմանյան Կայսրության փոքրամասնություն, վիրանգված էր: 1906-1912 թթ. Միությունը արևմտահայ գյուղացիությանն ապահովում էր սերմացուով, երկրագործական գործիքներով և այլն: Արևմտյան Հայաստանում, Սիլիկիայում և Օսմանյան Կայսրության հայաշատ այլ շրջաններում հիմնվել են դպրոցներ և որբանոցներ: 1914 թ. ՀԲԸՄ-ն ուներ 142 մասնաճյուղ Արևմտյան Հայաստանում, Սիլիկիայում, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Եվրոպայում և Աֆրիկայում, ընդհանուր թվով 8533 անդամ: 1914-ին Պողոս Նուբարը լինում է Եգիպտոսը և տեղափոխվում Փարիզ: Չնայած Առաջին աշխարհամարտի հետևանքով Միության տարբեր մասնաճյուղերի կողմից կրած մեծ կորուստներին, այն այնուամենայնիվ կարողանում է զգալի օգնություն ցուցաբերել Եղեռնը վերապրած հայերին (հատկապես մեծ ուշադրություն է դարձվել որբախնամ գործունեությանը): Առաջին համաշխարհային պատերազմից հետո ՀԲԸՄ-ի գործունեության հիմնական նպատակն էր «պահպանել և դարաձել հայ լեզուն, ինքնությունն ու ժառանգությունը»: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ՀԲԸՄ-ի նստավայրը Փարիզից տեղափոխվում է Նյու Յորք:

Միության ազգապահպան գործունեությունը առավել արդյունավետ է դարձել հետպատերազմյան շրջանում, հատկապես Ալեք Մանուկյանի նախագահության օրոք (1953-1989թթ.): Այդ ժամանակահատվածում ամբողջ աշխարհում ՀԲԸՄ-ն ընդլայնվում և դառնում է ամենաազդեցիկ համահայկական կազմակերպությունը:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղերն այժմ գործում են 26 երկրների մոտ 90 քաղաքներում, անդամների թիվն անցնում է 22 հազարը, մասնաճյուղերը 120-ն են, մշակութային կենտրոններ՝ 27-ը: 1990-ին բացվել է Միության ներկայացուցչական գրասենյակը Երևանում: Շուրջ 50 տարի անց վերսկսելով իր գործունեությունը Հայաստանում՝ ՀԲԸՄ-ն նախապատվությունը տալիս է ոչ թե զուտ մարդասիրական օգնությանը, այլ երկրի զարգացմանը նպաստող տարաբնույթ ծրագրերին՝ եկեղեցաշինական, հոգևոր, կրթական, սոցիալական, առողջապահական, մշակութային ու երիտասարդական: Ավելի քան հարյուրամյա իր ազգանպաստ գործունեության ընթացքում

ՀԲԸ Միությունը շուրջ 1 միլիարդ ԱՄՆ դոլար է ներամուծել հայ ժողովրդի կարիքներին, ընդ որում դրանից շուրջ 130 միլիոնը՝ Հայաստանի ծրագրերին:

↑ *Նուբարաշենի կառույցները*

ջությամբ՝ նույն տարվա հուլիսի 1-ին, միութենական և հանրապետական հիմնարկներին հստակ հաձնարարականներ էին տրվում ֆինանսավորելու և շինանյութերով ապահովելու համար, նախատեսվում էր ներգաղթողների արտադրական արտելները ապահովել անհրաժեշտ հումքով, գյուղաբնակ ներգաղթողները 3-4 տարով կամ ազատվում էին տարբեր տեսակի հարկերից, կամ էլ պետք է վճարեին կիսով չափ, վերջապես, սահմանվում էին արտասահմանի հայերից որպես նվիրատվություն տարբեր սարքավորումների և այլ ապրանքների ստացման և իրացման ձևերը: Որոշումը ուներ նաև հատուկ հավելված, ուր տրված էր այն 12 շինությունների ցանկը, որոնք պետք է կառուցվեին համաձայն Հայաստանի կառավարության ստանձնած պարտավորությունների և որոնցից 7-ը վերաբերում էին Նուբարաշենին: Ըստ էության, առաջին անգամ էր, որ Խորհրդային Միության ղեկավարները նման որոշում էին կայացնում ներգաղթած հայերի վերաբերյալ:

Ֆինանսավորումից բացի, ամենադժվար լուծվողը, ինչպես և նախորդ տարիներին, Նուբարաշենի ջրանցքի ու ջրմուղի խնդիրն էր: Դրանք պետք է շահագործման հանձնվեին 1937 թվականի հուլիսի 1-ին: Սակայն, Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն հուլիսի 3-ի նիստում ստիպված էր արձանագրել «Ջրմուղի շինարարությունը ժամանակին չի ավարտված: ...Ժողկոմխորհի նախագահին (Դուլոյան) միութենական մարմինների առաջ վերստին դնել խողովակները ոչ ժամանակին մատակարարելու հարցը»: Բայց կար և հպարտանալու պատճառ. «...Նուբարաշենի 1937 թվականի շինարարության ծրագիրը հիմնականում ավարտված է: Լիովին ավարտված են դպրոցը, մանկամսուրը, մանկապարտեզը, թատրոնը, բաղնիքը և բնակելի շենքերը... Լրիվ չի ավարտվել միայն հիվանդանոցի շենքը»:

1937 թվականի կեսերին Նուբարաշենի 100-ից ավելի բնակարաններում բնակվում էր շուրջ 1000 ներգաղթած հայ: Մեկ տարի անց ավանը վերանվանվեց Սովետաշենի, և միայն 1989-ին Խորհրդային Հայաստանի Գերագույն Խորհրդի որոշմամբ վերականգնվեց նախկին անունը: Հետագայում Նուբարաշենում կանգնեցվեց Պողոս Նուբարի կիսանդրին:

Էդուարդ Լ. Մելքոնյանի «Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն» գրքի նյութերի հիման վրա

«Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան» գրքից